— Ապրիլի վերջին Բուլղարիան հանդիսաւոր կերպով տօնեց տաճկաց լծից ազատուելու 25 ամեակը: Ապրիլի 23-ին Բուլղարիայի մայրաքաղաքը հարսի պէս զարդարուած էր: Մայր տաճարում, ուրեղ ներկայ էր Բուլղարիայի իշխանը միւս տէրութիւնների ներկայացուցիչների հետ, պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարեցին Աղէքսանդր Բ-ի համար: Գնացքը տաճարից ուղղուեց դէպի ազգային ժողովարանը, որի առաջ հրապարակում այդ օրը մեծ ազատարար Աղէքսանդր Բ-ի արձանի հիմք պիտի դրուէր: Ամբողջ ճանապարհին երգում էր 500 հոգուց բաղկացած երգեցիկ խումբը. գնացքին առանձին շուք էին տալիս սլաւոնական ազգութիւնների գոյնզգոյն դրօշները: Մաղթանքից յետոյ իշխանը դառնալով դէպի սինոդականները, արտասանեց մի զգացուած ճառ. յայտնելով իւր ուրախութիւնը, որ ինքն է կոչուած դնելու հիմնաքարը այն մարդու արձանի, որը կարող ձեռքի մի շարժումով իրագործեց տանջուող ժողովրդի վաղուցուայ ցանկութիւնը, և որ այդ օրը Բուլղարիան գործնական կերպով յայտնում է իւր երախտագիտութիւնը դէպի նա, որ վերակոչեց բուլղարական ժողովուրդը ազատ կեանքով ապրելու:

---

Վերջին ժամանակներս շատ շուտ շուտ յառաջ են գալիս Կ. Պոլսում պատրիարքական ճգնաժամեր, որոնց պատճառը քաղաքական, ազգային, կամ կուսակցական շահեր են լինում: Այս տարի եւս Զատկից մի քիչ առաջ Կոստանդին Ե. Տիեզերական պատրիարքը գահազուրկ եղաւ սինոդականների և խառն ժողովի վճռով. Սորա պատճառը մի կողմից պատրիարքի, միւս կողմից Սինոդի և խառն ժողովի մէջ ծագած տարաձայնութիւններն էին: Սինոդականների և խառն ժողովի մեծամասնութիւնը շատ դժգոհ էր պատրիարքից, որ նա եռանդով չէր պաշտպանում յոյն եկեղեցու շահերը Բ. դրան առաջ: Բաւական է ասել, որ Կոստանդինի պատրիարքութեան օրով Մակեդոնիայում փակուել են 32 յունական եկեղեցիներ:

Մայիսի 25-ին կատարուեցաւ Ֆէների պատրիարքարանի մեծ սրահում պատրիարքական ընտրութիւն Նաթանայէլ մետրապոլտի նախագահութեամբ: Հաւանական թեկնածուներ համարւում էին Իոաքիմ Գ. և Անթիմ Է. երկուսն եւս արդէն մի անգամ պատրիարք եղել են: Եկեղեցականների միաձայն հաւանութեամբ և ընտրողների ահագին մեծամասնութեամբ ընտրուեց Իոաքիմ. որին և Սուլթանը, հակառակ սպասուածին, իրատէով Մայիսի 28-ին հաստատեց պատրիարք:

Տ. Իոաքիմ յոյն եկեղեցու ամենաժողովրդական և ականաւոր հոգևորականներից մէկն է. Ծնուել է 1834 թ. Կ. Պոլսում, բայց արդէն 1863թ. պատրիարքական տեղապահ, իսկ յաջորդ թուին Վառնայի մետրապոլիտ է ընտրուել. 1878 թ. ծանր պարագաների մէջ միաձայն ընտրուեցաւ պատրիարք և արդիւնաւէտ գործունէութեամբ արդարացրեց ընտրողների ակնկալութիւնները. Առանձնապէս նա պաշտպան հանդիսացաւ յոյն եկեղեցու շահերին: 1872 թ. արդէն Կ. Պոլսոյ կրօնական ժողովում իր ազդեցութեամբ բուլղարներին հերձուածող հռչակել տուեց. իսկ պատրիարք դառնալուց յետոյ, բարեկարգեց մի շարք եկեղեցական արտաքին վարչութեան վերաբերեալ գործեր Բալկանեան թերակղզու վերայ և նորից վերականգնեց Տիեզերական պատրիարքի հեղինակութիւնն այստեղ: Պակաս արդիւնաւէտ չէր նորա գործունէութիւնը և ներքին կեանքում. նորա օրով վերաքննուեց ազգային սահմանադրութիւնը, հաստատուեցան մի շարք բարեգործական հաստատութիւններ, ինչպէս յիմարանոց և հիւանդանոց, հոգևորականների համար կղերանոց, ապաստանարան. նա հաստատեց տպարան, լրագիր: Մեծ հոգս տարաւ նմանապէս պատրիարքարանի և հոգևորականութեան ապահովութեան, ժողովրդի լուսաւորութեան մասին. Բայց հէնց այսպիսի եռանդոտ ազգաշահ գործունէութեամբ յարուցեց Բ. դրան դժգոհութիւնը իր դէմ և 1883 թ. ստիպուած եղաւ հրաժարուել պատրիարքութիւնից և հեռանալ մի վանք. Այս անյողդողդ կամքի տէր, օրինակելի բարի եռանդի տէր հովիւը նորից ժողովրդի միաձայն ցանկութեամբ կանչւում է յոյն պատրիարքական պատասխանատու ծանր պաշտօնին:

Տ. Իոաքիմ Գ. 254-րդ տիեզերական պատրիարքն է. առաջինը՝ ըստ յոյն եկեղեցու աւանդութեան, եղել է, ինչպէս յայտնի է, Ս. Անդրէաս առաքեալը (36թ.):

---

## ՄԱՅՐ ԱԹՈՌ

Պատասխան Նորին Կ. Մեծութեան Պետերհոֆից.

ԷՋՄԻԱԾԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Անկեղծ շնորհակալիմ՝ Ձեզ և միաբանութեան վանուցն Էջմիածնի, յաղագս աղօթից և բարեմաղթութեանց:**

ՆԻԿՈԼԱՅ

Վեհափառ Կաթողիկոսի հեռագիրը.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ

Ի մեծաշուք աւուրս Սրբազան թագադրութեան Ձերոյ Կայսերական Մեծութեան և Օգոստափառ Թագուհւոյ Կայսրուհւոյ՝ առաջի Իջման ս. Սեղանոյ Միածնի Որդւոյն Աստուծոյ, ընդ համայն միաբանութեան նախաթոռ վանուց ս. Էջմիածնի վերառաքեմք ի բարձունս զաղօթս ջերմագինս յաղագս առողջութեան և բարօրութեան Ձերոյ Մեծութեանց: Երկարեսցէ Տէր զաւուրս Ձեր ի փառս և յերջանկութիւն Մեծին Ռուսեայ

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԿԱՐՍ.

Ապրիլ 7

Արաքսի աջ ափին Սուրմալուի Ա. մասի պրիստաւն իր ձիաւորներով սպասում էր Նորին Վեհափառութեան գալստեան: Կամուրջն անցնելուց յետոյ Հայրիկը կառքը կանգնեցրեց, օրհնեց պրիստաւին և դիմաւորելու համար ընդ առաջ եկող Իգդիրցի ձիաւորներին ու շարունակեց ճանապարհը: Ձիաւոր դիմաւորողների թիւը հետզհետէ ստուարանում էր: Ուղիղ ժամը 4-ին Հայրապետական գնացքը մուտ գործեց Իգդիր: Բացի Իգդիրի, Իգդիրմաւայի և Բահարլուի ժողովրդից՝ շատ հարևանակ գիւղերից հայ և թուրք հաւաքուել էին Իգդիր, Հայոց Հայրիկին դիմաւորելու: Ամբողջ գիւղը տօնական կերպարանք էր առել և զարդարուած էր դրօշակներով ու ծառի կանաչ ճիւղերով. բոլոր խանութներն անխտիր փակ էին. այն փողոցները, որտեղից պիտի անց կենար Հայրապետական գնացքը, զարդարուած էին կանաչից հիւսած շղթաներով. պատերը զարդարուած էին գորգերով, մետաքսի թաշկինակներով. իսկ ժողովուրդը այնպէս էր խռնըւած այդ փողոցներում, որ հազիւ կառքերը կարողանում էին շարժուել: Անընդհատ լսւում էին «կեցցէ Հայրիկ» խօսքերը: Կառքերը կանգ առան եկեղեցի տանող կարճ փողոցի առաջ, ուր կանգնեցրած էր յաղթական կամար. մէջտեղում ամրացրած էր Հայրապետի մեծադիր պատկերը, ծաղիկներից ու կանաչից հիւսած պսակի մէջ: Կառքից ցած իջնելով՝ դիմաւորող քահանաների և հետևորդ վարդապետների հետ միասին, պատշաճաւոր «Հրաշափառ» շարականն ասելով՝ Վեհափառը մտաւ եկեղեցի և աղօթելուց յետոյ ներկայ գտնուեց երեկոյեան ժամերգութեան: Երգում էր ձեմարանի եկեղերաժշտութեան ուսուցիչ Տ. Կոմիտաս վարդապետը, որ մի քանի օր առաջ եկել էր Իգդիր, ժողովրդական երգեր ու «լէլէ»ներ ժողովելու:

Ժամերգութիւնից յետոյ Վ. Հայրապետը օրհնեց ժողովրդին՝ խոստանալով կիւրակէ օրը խօսել նրանց հետ: Հանդիսաւոր գնացքը նոյն կարգով ուղևորուեց Հայրապետի համար պատրաստուած օթևանը, ողևորիչ և երկար կեցցէների ուղեկցութեամբ: Պ. Սեղրակ տէր-Թովմասեանի տունը, որ պատրաստուած էր Մեծ հիւրի համար, դրսից զարդարուած էր կանաչներով և ծաղիկներով, իսկ ներսից՝ համեստ, բայց ճաշակաւոր կահաւորուած: Այդ օրը յոգնած լինելով Վեհափառը չկարողացաւ շատերին ընդունել, բայց բնակարանի բակը և լուսամուտների առաջ փողոցում հաւաքուած մեծ բազմութիւնը մինչև ուշ գիշեր երգում, նուագում և կեցցէներով օդն էր թնդացնում:

Յաջորդ օրը, ապրիլի 8-ին առաւօտեան 10 ժամին ներկայացան Նորին Վեհափառութեան Իգդիրի գաւառապետը և տեղական զօրաց հրամանատարը: Եկեղեցի իջնելով Վեհափառ Հայրապետը պատարագից վերջ իր բարձր ուշադրութիւնը դարձրեց եկեղեցու փոքրութեան և անշքութեան վրայ, խօսեց ընտանեկան սիրոյ մասին, օրհնեց բոլորին և գնաց հանգստանալու: Ճաշից յետոյ խումբ խումբ կանայք, օրիորդներ, երիտասարդներ և տղամարդիկ գնում էին Հոգևոր հօր աջը համբուրելու. Տէր-Թովմասեանների տունը այդ օրը մի կատարեալ ուխտա-